

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Մարգարետունի Մանուկյանի և Իշխան Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածով նախատեսված երիտասարդության օրը մայիսի 7-ին նշելու առաջարկությունը լրացուցիչ հիմնավորման և քննարկման կարիք ունի:

Ինչ վերաբերում է նշված տոնը ոչ աշխատանքային օր սահմանելուն, ապա հայտնում ենք, որ այն չի բխում աշխատանքային հարաբերությունների կողմերի շահերից, մասնավորապես, գործատուից պահանջվում են լրացուցիչ ֆինանսական միջոցներ աշխատուժի վրա կատարվող ծախսերում, երբ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված գործատուն աշխատողին աշխատանքի է ներգրավում ոչ աշխատանքային՝ տոնական կամ հիշատակի օրը,

ինչպես նաև աշխատավարձ ստանալու հնարավորությունից են զրկվում գործավարձով կամ ժամավարձով վարձատրվող աշխատողները, ովքեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրերին չեն աշխատելու:

Բացի վերը նշվածից, Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի վերլուծությունների համաձայն, Եվրոպական վերանայված սոցիալական խարտիային միացած երկրներում ոչ աշխատանքային պետական տոները վեցից տասնյոթն են, իսկ Հայաստանում արդեն իսկ սահմանված է տասնվեց ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օր:

2. 2-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 538-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունում հոկտեմբեր ամսվա երրորդ կիրակի օրը նշվում է որպես գյուղատնտեսության աշխատողի օր: Ձկնաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության ոլորտներից մեկը և այդ առումով ձկնաբուծի օրն արդեն իսկ նշվում է:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում հնարավոր փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի օգոստոսի 27-ի N 719-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը որոշակի չափանիշներ հիմք ընդունելով, առաջադրել է ելակետային այնպիսի սկզբունքներ ու մոտեցումներ, որոնց հիման վրա պետք է ընտրվեն և պետական տոնացույց ընդգրկվեն մեզանում նշվող տոներն ու հիշատակի օրերը: Ընտրության համար ելակետային համարվող պայմանների հետ մեկտեղ կարևորվել է նաև մասնագիտական քննությունն ունեցող տոները պետական տոնացույց չներառելու հանգամանքը: Նման մոտեցման նպատակն օրենքով առավել ընդհանուր ճանաչողություն, ազգային-գաղափարական հենք, հասարակական-սոցիալական պահանջ ու բովանդակային խորն իմաստ ունեցող տոներն ամրագրելն է, ապա դրանց կազմակերպման տոնահանդեսային

մշակույթի ձևավորումն ու տոնածիսական արժեքահամակարգի իմաստավորումը: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ այժմ մշակվում է օրենքի նախագիծ, որը հնարավորություն կընձեռի մասնագիտական տոները սահմանել համապատասխան գերատեսչության կողմից:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի ընդունման դեպքում**

«Տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի նախագծի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**Սոցիալական պաշտպանության բնագավառում կարգավորման ազդեցության
գնահատման եզրակացություն**

«Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» << օրենքի նախագծի վերաբերյալ

«Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» << օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» << օրենքի 27.1 հոդվածի և << Կառավարության 2010թ. հունվարի 14-ի N 18-Ն որոշման

համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական ազդեցության կարգավորման տեսանկյունից՝ բնագավառի վրա չունի ռազմավարական ազդեցություն,

բ) բնագավառի շահառուների վրա ազդեցության կարգավորման տեսանկյունից ունի բացասական ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՒՌՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է երիտասարդության տոնին, ձկնաբույծի օրվան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիշատակի և տոն օրերի՝ շաբաթվա ոչ աշխատանքային օրերի հետ համընկնելու դեպքում հաջորդ աշխատանքային օր տեղափոխելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ
օրենքի նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության
գնահատման**

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հետայսու՝ օրենք)՝ լրացնել 13.2 հոդվածով հետեւյալ բովանդակությամբ. «Երիտասարդության տոն՝ նշվում է մայիսի 7-ին, ոչ աշխատանքային օր»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 13.3 հոդվածով հետեւյալ բովանդակությամբ. «Ձկնաբույծի օր՝ նշվում է հոկտեմբերի 21-ին»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 19.1 հոդվածով հետեւյալ բովանդակությամբ. «Հայաստանի հանրապետության ոչ աշխատանքային օր հանդիսացող հիշատակի եւ տոն օրերի՝ շաբաթվա ոչ աշխատանքային օրերի հետ համընկնելու դեպքում (շաբաթ եւ (կամ) կիրակի), ոչ աշխատանքային համարել հիշատակի կամ տոն օրվան հաջորդող աշխատանքային օրը»:

Հոդված 4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկում ենք մայիսի 7-ին Հայաստանում նշել Երիտասարդության տոնը: Մայիս ամիսը համարվում է հայ ժողովրդի Մեծ հաղթանակների ամիսը: Շուշիի ազատագրման, Հայրենական պատերազմում տարած Մեծ հաղթանակի, Ղարաբաղի խառնուրդի, Բաշ-Ապարանի հերոսամարտերում, ինչպես նաեւ Առաջին Հանրապետության անկախության նվաճման գործում մեծ է եղել հայ երիտասարդության դերակատարությունը: Հետեւաբար կարծում ենք Հաղթական տոներից առաջ՝ մայիսի 7-ին, պետք է նշել երիտասարդության օրը: Մայիսը, եւ ընդհանրապես գարունը մեզանում խորհրդանշում է հավերժություն, զարթոնք, վերածնունդ եւ երիտասարդություն, իսկ 7 թիվը երիտասարդության ամենասիրելի թվերից մեկն է: Դա ապացուցում է երիտասարդության շրջանում անցկացված հարցումներն ու հետազոտությունները: Երիտասարդության տոնը Մայիսի 7-ին նշելու առաջարկությունը քննարկվել է հավանության է արժանացել Երեւանի Պետական Համալսարանի Պատմության ֆակուլտետի պատմաբանների, ազգագրագետների եւ

պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների կողմից:
Երիտասարդության տոնը՝ որպես պետական տոն օր, նշվում է մասնավորապես՝
Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելոռուսում, Տաջիկստանում եւ աշխարհի բազմաթիվ
այլ երկրներում: Ողջ աշխարհում նշվում է նաեւ «Երիտասարդության միջազգային օրը»՝
օգոստոսի 12-ին: Իսկ նախկին ԽՍՀՄ-ում նշվում էր «Սովետական երիտասարդի օրը»:

Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է «Տոների եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ
օրենքում հոկտեմբերի 21-ը համարել որպես ձկնաբույծի օր: «Հայ Ձկնաբույծների
Միավորում» հասարակական կազմակերպության եւ «Հայ Ձկնաբույծների» 2011թ.
հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած տարեկան համագումարի ընդունած կարեւոր
որոշումներից է եղել դիմել «Օրինաց երկիր» խմբակցությանը հանդես գալ օրենսդրական
նախաձեռնությամբ՝ լրացում կատարելով «Հայաստանի Հանրապետության տոների եւ
հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում՝ հոկտեմբերի 21-ը
հայտարարելով «Ձկնաբույծի օր»: Օրը համընկնում է նաեւ «Հայ Ձկնաբույծների
միավորում» հասարակական կազմակերպության հիմնադրման օրվա հետ:

Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է լրացում կատարել «Տոների եւ հիշատակի
օրերի մասին» ՀՀ օրենքում: Նախագծով առաջարկվող լրացումը խնդիր ունի մեր
քաղաքացիներին հնարավորություն ընձեռնել օրենքով նախատեսված ՀՀ ոչ
աշխատանքային օր հանդիսացող հիշատակի եւ տոն օրերի՝ շաբաթվա ոչ
աշխատանքային օրերի հետ համընկման դեպքում օգտվել այդ իրավունքից՝ հիշատակի
կամ տոն օրվա հետ համընկած շաբաթվա ոչ աշխատանքային օրվա հաջորդ
աշխատանքային օրը: